

քահանայիցն, մերթ սաղմոսարանին գորդայիւք, մերթ վարդապետական բանիւք, քաջալերէին զբազմութիւն զաւրացն՝ վայր մի քաջանալ, եւ անսպառ բարեացն լինել ժառանգաւոր: 6 Իսկ սուրբ երեցն Յովսէփ, որ եւ զկաթողիկոսութեանն Յայոց ունէր զաթոռ, հրաման տայր երանելոյն առն Աստուծոյ Ղեւոնդի խրատել զժողովուրդն եւ քաջալերել: 7 Եւ սուրբ երեցն Ղեւոնդ զամենայն զգիշերն անձանձրոյթ առաքելական վարդապետութեամբ զաւրացուցեալ ուսուցանէր զամենեսեան յորդաբուրիս<sup>1</sup> իմաստութեամբ, առակաց մեկնութեամբք, հոգեշնորհ վարդապետութեամբ. որոյ բանքն նման քաղցրութեան մեղու բոխէին ի բերանոյ արդարոյն, որ էր լսողացն ցնծութիւն. եւ ախորժաբար զնա ծանուցանէր վերին ազդեցութեամբ լուսաճանչ<sup>2</sup> պայծառութիւնն ի նմա ներքին մարդոյն եւ տեսակութիւն հրեշտակաւորութեան երեսացն կերպարանի: 8 Չոր եւ յառաջագոյն ժամանակի, կալով ի քուն սրբոյն, այրն Աստուծոյ Մաշտոց վարդապետն նորին՝ հանդերձ եւ այլ աշակերտաւք<sup>3</sup> իւրովք, երանելեան Կորեամբ եւ Արծանաւ, տեսանէին արթնութեամբ ճառագայթեալ շուրջ զնովաւ լոյս սաստիկ. որք անդէն եւ անդ ծանեան երանելի արքն սուրբ Յոգևով զվախճան սրբոյն, թէ նահատակութեամբ կատարի. զոր թեպէտ եւ նմա ոչ յայտնեցին զսքանչելագործութեան զտեսութիւնն, սակայն ի բազում շշնջելն՝ պատմեալ հռչակեցաւ բան երեւմանս այսորիկ: 9 Որ յուսուցանելն իւրում բազում բանս հոգեւորս՝ յիշեցուցանէր ամենեցուն զվարս եւ զժուժկալութիւն առաջնոցն, եւ նախ զանպատումն զհամբերութիւն սրբոյն Գրիգորի, ապա զայլոցն ամենեցուն. «Որոց գիտացեալ, ասէ, զվաղ եւ զանագան կենցաղոյս զվախճան՝ ընտրեցին ըմբռնել զյաւիտենից կեանսն: 10 Ոմանք տանջանաւք եւ մահուամբ, ոմանք պահաւք եւ գետնատարած անկողնաւք, այլք աղքատսիրութեամբք<sup>4</sup> եւ աւտարասիրութեամբք<sup>5</sup> յանգետս ընդունել զհրեշտակս արժանի եղեն. եւ կեսք աշխարհաշինութեամբք եւ արդար դատողութեամբ երեւեալ՝ ընտիր գտան Աստուծոյ: 11 Քանզի ոչ բոլորեցունց դիպի մարտիրոսութեան<sup>6</sup> վիճակն, այլ ըստ ժամանակի որպէս եւ բաշխէ վերին տեսչութիւն: 12 Եւ պարտին առողքն՝ արդար վաճառականութեամբ գնել ընդ անցաւորիս<sup>7</sup> զանանցն, ընդ ապականացուիս զանանց բարութիւնսն: 13 Իսկ պահեալքդ այժմ մեծի եւ պատուական բաժակի՝ փութասցուք լինել արժանի հասանել ի մասն ժա-

1 ՁԳտ. յորդաբուրիս

2 Ձ. զլուսաճանչ

3 Ատ. հանդերձ եւ աշակերտոք. ԲԳտ. հանդերձ աշակերտոք

4 Ձ. աղքատասիրութեամբ

5 ՏՏ. չիք եւ օտարասիրութեամբք

6 ՁԱԲտ. մարդասիրութեան. Գտ. ուղղագրել է այսպէս ըստ (Ն. Բ.)

7 Ձ. ընդ անցաւորս